ԱՐԺԱԽԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Վերջերս հրատարակվել է կանադահայ լուսանկարիչ Հրայր Խաչերյանի «Արցախ, նկարչական մի ուղեւորություն, 1997թ» ալբոմը: Այս գործը լուսանկարչի Արցախ կատարած երեք ուղեւորությունների արդյունքն է: Սակայն այս գործը հրատարակվելու ժամանակ, երբ արվեստագետը պատրաստվում էր վերստին մեկնել Արցախ եւ ամբողջացնել իր տպավորությունները, պարզվեց, որ հիվանդ է քաղցկեղով: Լուսանկարչի համար իր մնացած կյանքն իմաստավորելու կարեւորությունն էր այս ալբոմի հրատարակությունը: Ըստ Խաչերյանի, այդ ալբոմը մի ժողովրդի կյանքի ու պայքարի վավերագրությունն է:

Հրայր Խաչերյանը ծնվել է Բեյրութում, 1961թ. եւ 1984թվականից ապրում է Մոնրեալում: Թերթը գրում է, որ ալբոմը բաղկացած է չորս մասից. առաջինը լուսանկարների միջոցով պատմում է Արցախի հայակապ ճարտարապետական կոթողների մասին, երկրորդ մասը ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի երկիրն ու պետությունն այսօր իր անզուգական բնաբիարհով, աբիարհագրությամբ ու կենցաղով: Երրորդ մասը նվիրված է երկիրը շենացնող մարդկանց, իսկ չորրորդը՝ հայրենիք Արցախի համար պայքարով ու նրա ամեն մի քիզ հողը արյամբ պաշտպանող մարդկանց կյանքին՝ լինեն դիրքերում կռվելիս, թե վիրավորված:

Լուսանկարները գեղագիտական արժեքից բացի ունեն նաեւ պատմաճանաչողական կարեւոր նշանակություն, քանի որ այստեղ պատկերված են Արցախի երեկը, այսօրն ու վաղը: Ալբոմի հրատարակման գործում Հրայր Խաչերյանին օժանդակել է Ամերիկայի անթիլիասական թեմի առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը:

Մ.Դ.